real world
real people

«ԻՐԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ, ԻՐԱԿԱՆ ՄԱՐԴԻԿ» ՍՀԿ-Ի ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ

2026

www.realwrp.org

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից «ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում 2026թ.-ի առաջին եռամսյակի (Հունվար-մարտ) ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	1545
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	2330
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	206
Իրավաբանի կողմից տրամադրված ծառայություն	0
Փոխօգնության խմբեր	39
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՀՀ	358
ՀՌՎ դեղերի փոխանցում / ՌԴ	159
Նախկինում ՀՌՎ բուժման դադար ունեցած և այժմ բուժմանը կցված	35



«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից, «ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ վարակի կանխարգելում» ծրագրի շրջանակում 2026թ.-ի առաջին եռամսյակի (հունվար-մարտ) ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Մատուցված ծառայություններ	**3330**
Ծառայություններ ստացած անձինք	**2441**
Թեստավորում անցած անձինք	**2224**
Բացահայտված ՄԻԱՎ դրական դեպքեր	**11**
Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն ուղեգրված ՄԻԱՎ դրական դեպքեր	**6**

www.realwrp.org



«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ աշխատակիցների կողմից «Տուբերկուլոզ ունեցող անձանց խնամք և աջակցություն» ծրագրի շրջանակում 2026թ.-ի առաջին եռամսյակի (Հունվար-մարտ) ընթացքում տրամադրված ծառայությունների հաշվետվությունը

Հավասարը հավասարին խորհրդատուի կողմից տրամադրված ծառայություն	236
Սոցիալական աշխատողի կողմից տրամադրված ծառայություն	392
Հոգեբանի կողմից տրամադրված ծառայություն	78
ԹԱԿ-ից և պոլիկլինիկաներից մեզ ուղեգրված անձինք	205
Մեր կողմից ծառայություններ ստացած անձինք	198
Փոխօգնության խմբեր	42

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի կողմից կազմակերպված միջոցառումներ

Մարտի 17

Մարտի 17-ին «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» սոցիալական հասարակական կազմակերպությունը անցկացրեց աշխատանքային քննարկում՝ նվիրված կազմակերպության կողմից իրականացված հետազոտությունների և զեկույցների ներկայացմանը:

Մարտի 26-27

Մարտի 26-27-ը քաղաքից դուրս կազմակերպեցինք ջերմ ու ոգեշնչող ճամբար՝ ՄԻԱՎ-ով ապրող ծնողների և նրանց երեխաների համար: Մասնակիցները ներգրավված էին տարբեր սեսիաներում, որոնց ընթացքում խոսեցինք ՄԻԱՎ-ի ոլորտում արձանագրված հաջողությունների և առաջընթացի մասին, քննարկեցինք ինքնախնամքի կարևորությունը, առողջ ապրելակերպի հիմունքները, ինչպես նաև անդրադարձանք անձնական տվյալների պաշտպանությանը և թվային անվտանգությանը:

Հանդիպումներ տեղական և միջազգային կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև՝ մասնակցություն միջոցառումներին

Մարտի 11

Մարտի 11-ին տեղի ունեցավ աշխատանքային քննարկում Երեխաների պաշտպանության ցանցի անդամ կազմակերպությունների միջև՝ հետագա համատեղ ադվոկացիոն աշխատանքի շրջանակում քաղաքականության առաջարկությունների և դիրքորոշումների մշակման նպատակով: Հանդիպմանը մասնակցում էր նաև ԻԱԻՄ ՍՀԿ-ի գործադիր տնօրեն Նաիրուհի Սաֆարյանը:

Մարտի 24

Մարտի 24-ին ԻԱԻՄ ՍՀԿ-ի նախագահ Ժենյա Մայիլյանը հանդիպեց ԿԲԱԿ նորանշանակ տնօրենի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվեցին իրականացված ծրագրերն ու նախաձեռնությունները, ինչպես նաև ոլորտում առկա մարտահրավերներն ու հետագա համագործակցության հնարավոր ուղղությունները:

ԶԼՄ-ների անդրադարձը «Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ-ի գործունեությանն ու միջոցառումներին

PODQAT

«Իրական աշխարհ, իրական մարդիկ» ՀԿ գործադիր տնօրեն, իրավապաշտպան Նաիրուհի Սաֆարյանի հետ խոսել ենք 2 կարևոր, բայց տաբուացված թեմաների շուրջ՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և թմրամիջոցներ գործածողների մասին: Ինչպես կանխարգելել և ինչպես օգնել, եթե արդեն իսկ խնդիրն առկա է:

ԲՈՒՆ TV

Եթերաշրջանի գլխավոր նախագծերից մեկի՝ «Բուն բանավեճի» երկրորդ թողարկումը նվիրված է Հայաստանում թմրաշրջանառության հետ կապված խնդիրներին: Պետության և քաղհասարակության ներկայացուցիչները քննարկում են թմրանյութերի օգտագործման պատճառներն ու հետևանքները, ապօրինի թմրաշրջանառությունը կանխելու ուղղությամբ պետության գործողությունները, ինչպես նաեւ թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց հետ հարաբերվելու խնդիրը:

real world
real people

«Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ» ՍՀԿ

+374 98 66 33 83

info@realwrp.com

www.realwrp.org